ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի նոյեմբերի 27-ին

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հոդված 23. Սոցիալական ապահովության և բժշկական օգնության իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություններ, ժամանակավոր անաշխատունակության, արտադրությունում աշխատանքային խեղման, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի համար տրվող նպաստներ, ~~պետության կողմից երաշխավորված անվճար~~ օրենքով նախատեսված բժշկական օգնություն և սպասարկման լրացուցիչ ծառայություններ~~ում~~, ինչպես նաև ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

2. Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին~~ն~~ ու ապաստան չստացած փախստականներին~~ն~~ ունեն ~~պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում~~ օրենքով նախատեսված բժշկական օգնություն և սպասարկման լրացուցիչ ծառայություններ~~—~~ստանալու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունք, եթե բավարարում են այդ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: